



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2008թ. առաջին եռամսյակում /վերլուծություն/

2008թ. առաջին եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 35085 գործարքներ, որոնց քանակը 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 25.4%-ով, իսկ 2007թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 14.1%-ով:

2008թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 12495 օտարման գործարքների 84.2% կազմել են առուվաճառքները, 14.8%՝ նվիրատվությունները և 0.9%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման

գործարքների քանակի 30.9% արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 32.2% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2008թ. առաջին եռամսյակում, 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 29.8%-ով, իսկ 2007թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 3.3%-ով:

2008թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 61.0% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 35.8%-ով, իսկ 2007թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 14.9%-ով:

2008թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

<i>Համայնքներ</i>	<i>Միջին գները /դրամ/</i>		
	<i>առաջին եռամսյակ 2007թ.</i>	<i>առաջին եռամսյակ 2008թ.</i>	<i>չորրորդ եռամսյակ 2007թ.</i>
Կենտրոն	417700	472400	470900
Արաբկիր	326200	387600	377700
Քանաքեռ-Զեյթուն	232600	298200	291900
Նոր-Նորք	207000	259000	250100
Ավան	192400	259400	250100
Էրեբունի	205600	260000	249700
Շենգավիթ	217500	269200	261700
Դավթաշեն	226200	276900	275300
Աջափնյակ	205500	264500	257700
Մալաթիա-Սեբաստիա	194000	255500	250400
Նուբարաշեն	118000	145400	136400
<i>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</i>	<i>231200</i>	<i>286200</i>	<i>279300</i>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. առաջին եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել են 2.5%-ով:

2008թ. առաջին եռամսյակում Երևանում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2008թ. առաջին եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1253 բնակարաններ, որոնց քանակը 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 22.4%-ով, իսկ 2007թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 12.3%-ով:

2008թ. առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան

բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին եռամսյակ 2007թ.	առաջին եռամսյակ 2008թ.	չորրորդ եռամսյակ 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	90600	115300	111500
	Ապարան	28300	31400	30700
	Թային	32700	40600	40300
Արարատ	Արտաշատ	71600	91500	90000
	Մասիս	80600	119800	112100
	Վեդի	53400	76000	71300
	Արարատ	52600	58700	58000
Արմավիր	Վաղարշապատ	112000	154500	143800
	Արմավիր	79600	112900	107500
	Մեծամոր	51400	72100	67200
Գեղարքունիք	Սևան	52500	79600	73500
	Գավառ	31900	42400	39400
	Մարտունի	46500	63900	59100
	Վարդենիս	25200	29500	28300
	Ճամբարակ	14100	15700	15500
Լոռի	Վանաձոր	64000	82900	78900
	Ստեփանավան	31900	44500	42200
	Սպիտակ	42300	59600	54900
	Ալավերդի	23400	28100	27600
	Տաշիր	22500	29300	28600
	Թումանյան	5400	5500	5500
	Շամլուղ	3000	3200	3200
	Ախթալա	11200	12700	12500
Կոտայք	Աբովյան	128700	158700	153000
	Նոր Հաճն	89000	115100	112400
	Բյուրեղավան	62000	88600	82400
	Եղվարդ	80000	106800	104400
	Հրազդան	44900	60700	57800
	Ծաղկաձոր	81900	136000	109900
	Չարենցավան	52800	79500	71800
Շիրակ	Գյումրի	60900	88100	81800
	Արթիկ	40800	52400	48700
	Մարալիկ	24000	26100	25800
Սյունիք	Գորիս	62800	93000	82300
	Կապան	57500	81700	73000
	Սիսիան	48800	64500	58600
	Մեղրի	35500	44500	42600
	Ագարակ	23100	28400	27300
	Քաջարան	29700	42900	39500
	Դաստակերտ	6800	7000	7000
Վայոց Ձոր	Վայք	54000	69900	68300
	Եղեգնաձոր	63600	89600	86700
	Ջերմուկ	94600	121500	114900
Տավուշ	Դիլիջան	59400	82500	76800
	Իջևան	77700	113100	102000
	Բերդ	33000	37500	36200
	Նոյեմբերյան	26500	29600	29000

	Այրում	18000	21000	21000
--	--------	-------	-------	-------

2008թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել են 6.4%-ով:

2008թ. առաջին եռամսյակում հանրապետությունում իրականացված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճման միտում:

2008թ. առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1447 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 321, մյուս մարզերում միասին վերցրած՝ 1126: 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 29.6%-ով, ընդ որում Երևանում՝ 43.7%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 24.2%-ով: 2007թ. առաջին եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 0.2%-ով, ընդ որում Երևանում՝ 21.1%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 4.5%-ով:

2008թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

<i>Համայնքներ</i>	<i>Միջին գները /դրամ/</i>		
	<i>առաջին եռամսյակ 2007թ.</i>	<i>առաջին եռամսյակ 2008թ.</i>	<i>չորրորդ եռամսյակ 2007թ.</i>
Կենտրոն	424300	486000	476500
Արաբկիր	337600	396400	391000
Քանաքեռ-Զեյթուն	237700	307400	296000
Նորք-Մարաշ	210600	265800	248400
Ավան	195500	267100	254100
Էրեբունի	210100	265900	253600
Շենգավիթ	220200	273600	264500
Դավթաշեն	231500	288100	279800
Աջափնյակ	208500	270600	262000
Մալաթիա-Սեբաստիա	196800	266300	254400
Նուբարաշեն	120800	150600	138100
<i>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</i>	<i>235800</i>	<i>294300</i>	<i>283500</i>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. առաջին եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել են 3.8 %-ով:

2008թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն նվազման միտում:

2008թ. առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին եռամսյակ 2007թ.	առաջին եռամսյակ 2008թ.	չորրորդ եռամսյակ 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	93600	118900	116300
	Ապարան	30700	34500	33700
	Թալին	35000	43900	43000
Արարատ	Արտաշատ	73900	97500	95700
	Մասիս	84600	123500	115000
	Վեդի	56500	80400	72900
	Արարատ	55200	63900	63200
Արմավիր	Վաղարշապատ	114900	157300	145800
	Արմավիր	82200	116700	109900
Գեղարքունի ք	Սևան	54800	82000	74900
	Գավառ	34200	44900	41300
	Մարտունի	49300	67000	60700
	Վարդենիս	28500	31800	30900
	Ճամբարակ	16300	19300	18800
Լոռի	Վանաձոր	67200	88300	84600
	Ստեփանավան	35200	48900	46100
	Սպիտակ	45600	62900	56600
	Ալավերդի	26000	30600	30100
	Տաշիր	24700	32600	30200
	Թումանյան	7400	9200	8800
	Շամլուղ	4900	6200	5800
	Ախթալա	13000	15600	15100
Կոտայք	Աբովյան	133200	164100	159100
	Նոր Հաճն	92200	120700	116700
	Բյուրեղավան	64800	92000	84000
	Եղվարդ	84400	111500	107600
	Հրազդան	47700	64800	61400
	Ծաղկաձոր	93500	200100	171800
	Չարենցավան	55400	81900	73800
Շիրակ	Գյումրի	64000	93600	87100
	Արթիկ	43100	54600	51100
	Մարալիկ	26400	29800	29000
Սյունիք	Գորիս	65600	95100	84700
	Կապան	60700	85000	77000
	Միսիան	51200	67400	61000
	Մեղրի	38100	48000	45200
	Ագարակ	25500	30700	28900
	Դաստակերտ	9100	10000	9800
Վայոց Ձոր	Վայք	57200	74700	70200
	Եղեգնաձոր	66900	95500	89600
	Ջերմուկ	44500	70600	64100

Տավուշ	Դիլիջան	62000	86900	81100
	Իջևան	80700	115700	104200
	Բերդ	35300	39800	38900
	Նոյեմբերյան	28300	35000	34600
	Այրում	19200	22800	22800

2008թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել են 7.0%-ով:

2008թ. առաջին եռամսյակում հանրապետությունում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

Ընդհանուր առմամբ, 2008թ. առաջին եռամսյակում հանրապետությունում օտարվել են 5152 միավոր /3314.12 հա/ հողեր, որից Երևանում՝ 339 միավոր /43.12 հա/, այդ թվում 22 հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 141 միավոր /23.33 հա/ հողեր, որից Երևանում՝ 90 միավոր /7.93 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2218 միավոր /2958.15 հա/, որից Երևանում՝ 15 միավոր /1.67 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1876 միավոր /165.77 հա/, որից Երևանում՝ 200 միավոր /15.95 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 936 միավոր /62.58 հա/, որից Երևանում՝ 118 միավոր /21.31 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 69 միավոր /49.46 հա/, որից Երևանում՝ 6 միավոր /4.19 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 46 միավոր /75.60 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 4 միավոր /2.47 հա/,
- տրանսպորտի օբյեկտների հողեր՝ 3 միավոր վարձակալության իրավունքի վաճառք /0.10 հա/:

2008թ. առաջին եռամսյակում հանրապետությունում օտարված հողերից 4793 միավորի /3036.75 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 309 միավոր /40.67 հա/, նվիրատվության գործարքներ՝ 342 միավորի /274.78 հա/, որից Երևանում՝ 25 միավոր /1.85 հա/ և փոխանակության գործարքներ՝ 17 միավորի /2.59 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.60 հա/:

Հանրապետությունում 2008թ. առաջին եռամսյակում, 2007թ. առաջին եռամսյակի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 8.9%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 22.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել՝ 3.1%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 13.6%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 794.28 հա, որից 772.40 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 42.1% կամ 2020 գործարքներ /1536.29 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 124 գործարքներ /22.22 հա/, իսկ 57.6% կամ 2759 միավորը /1492.89 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 183 միավոր

/17.90 հա/: 2008թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 14 գործարք /7.57 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Ստորև ներկայացվում է 2008թ. առաջին եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չեռական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	6	4.19	42	5.38	76	12.65	14	1.59	0	0.00	134	9.25	35	7.05
Արագածոտն	159	339.60	2	0.09	13	1.29	44	3.37	143	225.13	1	0.13	144	13.36	5	0.10
Արարատ	122	168.89	8	5.08	97	8.27	125	3.74	280	124.64	3	4.06	208	18.20	13	1.39
Արմավիր	74	314.39	4	1.16	17	1.72	50	0.99	266	458.01	0	0.00	204	17.70	13	0.31
Գեղարքունիք	17	100.18	0	0.00	103	9.71	48	5.19	26	19.13	0	0.00	62	8.36	5	0.58
Լոռի	4	1.74	8	4.89	30	2.13	87	6.57	222	178.69	2	0.45	30	3.27	16	0.39
Կոտայք	151	357.30	8	5.08	70	5.68	125	5.87	314	211.50	3	0.32	317	28.89	14	3.93
Շիրակ	7	1.09	6	5.04	87	5.46	43	0.96	53	52.68	0	0.00	25	2.44	7	0.13
Սյունիք	7	7.95	7	10.07	14	1.15	96	1.81	32	31.28	1	2.92	16	1.23	7	0.36
Վայոց Ձոր	36	47.60	2	0.07	24	1.84	39	1.20	19	23.84	0	0.00	13	1.40	4	0.46
Տավուշ	21	6.39	6	5.71	48	3.33	61	2.29	47	23.26	0	0.00	36	2.98	6	1.32
Ընդամենը	598	1345.13	57	41.38	545	45.96	794	44.64	1416	1349.75	10	7.88	1189	107.08	125	16.02

Ստորև ներկայացվում է 2008թ. առաջին եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	80	12.69	6	4.19	20	1.43	54	7.07	44	9.52	0	0.00	0	0.00	22	3.95	22	5.57
Արագածոտն	6	0.05	0	0.00	0	0.00	6	0.05	210	343.85	157	339.15	2	0.09	13	1.29	38	3.32
Արարատ	22	2.63	2	2.26	2	0.09	18	0.28	329	180.37	121	165.89	6	2.82	95	8.19	107	3.47

Արմավիր	9	0.06	1	0.01	0	0.00	8	0.05	127	315.43	65	311.62	3	1.15	17	1.72	42	0.94
Գեղարքունիք	10	1.09	0	0.00	1	0.31	9	0.78	157	105.98	16	92.18	0	0.00	102	9.40	39	4.40
Լոռի	6	0.07	0	0.00	0	0.00	6	0.07	123	15.26	4	1.74	8	4.89	30	2.13	81	6.50
Կոտայք	24	0.82	0	0.00	4	0.14	20	0.68	330	373.12	151	357.30	8	5.08	66	5.54	105	5.20
Շիրակ	16	0.49	0	0.00	8	0.21	8	0.28	127	12.05	7	1.09	6	5.04	79	5.24	35	0.68
Սյունիք	6	6.34	1	6.05	0	0.00	5	0.29	118	14.64	7	7.95	6	4.02	14	1.15	91	1.52
Վայոց Ձոր	1	0.004	0	0.00	0	0.00	1	0.004	100	50.71	36	47.60	2	0.07	24	1.84	38	1.20
Տավուշ	14	0.18	0	0.00	6	0.12	8	0.06	121	17.49	20	6.35	6	5.71	42	3.21	53	2.22
Ընդամենը	194	24.42	10	12.51	41	2.30	143	9.61	1786	1438.42	584	1330.87	47	28.87	504	43.66	651	35.02

Հանրապետությունում 2008թ. առաջին եռամսյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 14 գործարքներ /14.26 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2008թ. առաջին եռամսյակում, 2007թ. առաջին եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 13.8%-ով: Ընդ որում Երևանում նվազել է 4.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 14.1%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 30.1%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել՝ 9.7%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել՝ 0.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 67.9%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. առաջին եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	136	289.00	35.3	5500.0	234.0	108	176.44	362.2	12000.0	3065.1
Ապարան	1	0.80	42.5	42.5	42.5	4	5.48	86.5	2727.3	399.6
Թալին	20	49.35	34.7	352.9	108.7	28	23.41	90.6	5494.5	430.6
Ծաղկահովիտ						1	2.68	77.0	1000.0	184.6
Արարատի մարզ										
Արտաշատ	36	55.98	32.4	2332.3	889.7	126	42.59	335.1	10833.3	1614.3
Մասիս	27	30.78	30.8	2250.0	446.2	43	28.77	181.1	11904.8	2043.0
Վեդի	58	79.12	24.7	2552.3	482.3	110	52.96	203.8	10795.1	1425.2
Արմավիրի մարզ										
Արմավիր	6	15.63	69.0	2158.3	548.5	112	72.67	294.3	9090.0	1035.1
Բաղրամյան	40	211.39	33.8	802.5	91.1	31	298.71	90.6	2561.1	626.4
Վաղարշապատ	19	84.60	30.0	2464.0	889.0	119	82.96	443.7	11764.7	1816.7
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						7	1.54	190.2	1875.0	398.3
Ճամբարակ	8	2.86	196.4	1410.0	915.8	11	8.71	45.3	953.3	163.8
Մարտունի						4	2.32	45.3	2850.0	485.9
Սևան	2	1.64	248.2	880.0	564.1	1	1.00	45.3	2134.8	208.4

Վարդենիս	6	87.68	155.0	2541.0	1097.1	3	5.56	27.2	2575.1	272.5
Լոռու մարզ										
Ալավերդի	3	1.14	130.7	1155.0	642.9	111	56.04	163.0	6424.2	1142.5
Գուգարք						1	0.22	226.4	6065.9	971.5
Սպիտակ	1	0.60	242.0	242.0	242.0	6	1.68	226.4	5555.5	541.1
Ստեփանավան						23	19.54	90.6	2257.5	397.6
Տաշիր						81	101.22	45.3	1384.4	217.1
Կոտայքի մարզ										
Արմվան	51	118.58	35.5	1260.9	259.3	128	96.25	271.7	11942.7	3757.7
Եղվարդ	78	217.74	34.8	1303.5	329.1	155	86.77	172.1	11971.8	2647.4
Հրազդան	22	20.99	61.3	8060.8	598.5	27	16.62	113.2	10256.4	1048.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						33	28.36	249.0	1693.1	473.9
Ամասիա						3	8.71	36.2	261.0	120.0
Անի						14	14.13	108.7	546.9	264.4
Աշոցք								45.3	215.8	118.5
Արթիկ	7	1.09	105.0	691.1	345.2	3	1.48	63.4	1428.6	182.1
Սյունիքի մարզ										
Գորիս						14	11.53	90.6	1023.2	362.3
Կապան	5	6.55	180.0	1058.3	549.4	4	4.34	54.3	841.6	237.3
Մեղրի	1	0.51	138.6	138.6	138.6	2	0.63	181.1	3000.0	520.5
Սիսիան	1	0.89	1008.7	1008.7	1008.7	12	14.79	45.3	1977.4	254.4
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	16	25.06	34.4	601.2	234.6	6	17.92	117.7	10000.0	1333.3
Վայք	20	22.54	33.7	208.0	92.2	13	5.92	54.3	1430.7	521.3
Տավուշի մարզ										
Բերդ	10	2.14	147.1	550.0	356.1	7	2.57	45.3	3783.8	378.5
Իջևան	10	4.21	51.8	2970.0	800.3	13	8.39	240.0	9454.5	842.5
Նոյեմբերյան						27	12.30	45.3	7368.4	573.6

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. առաջին եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	Նվազագույն	Առավելագույն	Միջին	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	Նվազագույն	Առավելագույն	Միջին
			և	և	և			և	և	
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	3430.0	400.6	2517.8	1459.2	139	124491.0	113.2	22222.2	2460.5
Ապարան	10	9500.0	115.0	115.0	115.0	2	3360.0	113.2	632.1	207.4
Թալին						3	5710.0	45.3	1454.8	103.4
Ծաղկահովիտ								45.3	361.2	69.8
Արարատի մարզ										
Արտաշատ	42	43767.0	145.0	441.0	313.3	36	35760.0	135.8	7140.3	918.2
Մասիս	26	18008.0	276.4	1659.4	1287.8	113	85262.0	135.8	25000.0	1200.6
Վեդի	27	20087.0	165.6	1088.9	327.1	58	60069.0	113.2	5000.0	667.2

Արմավիրի մարզ										
Արմավիր	9	9000.0	652.1	652.1	652.1	62	61497.0	131.6	9090.9	1182.1
Բաղրամյան								81.5	833.3	141.0
Վարդարշապատ	8	8200.0	277.2	693.0	485.1	140	113664.0	135.8	26528.4	1528.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	6	6340.0	110.2	115.0	112.6	13	17530.0	135.8	1084.3	370.1
Ճամբարակ						2	3213.0	45.3	2286.2	101.1
Մարտունի	81	56056.0	37.5	116.5	99.9	34	40610.0	90.6	5000.0	262.7
Սևան	15	31651.0	188.1	1140.6	443.2	8	12900.0	90.6	3110.4	163.8
Վարդենիս						5	9360.0	45.3	987.2	118.4
Լոռու մարզ										
Ալավերդի						5	5501.0	67.9	1388.9	137.2
Գուգարք	25	18072.0	111.5	7219.0	2864.3	10	11889.0	67.9	14083.3	575.2
Սյիխտակ						9	7570.0	63.4	1348.3	134.5
Ստեփանավան	5	3200.0	277.0	277.2	277.2	3	4600.0	45.3	1666.7	111.4
Տաշիր						2	2700.0	45.3	400.0	68.5
Կոտայքի մարզ										
Արույան	34	25965.0	270.0	2325.0	943.6	136	126877.0	135.8	35353.5	1937.7
Եղվարդ	4	1933.0	845.2	1654.1	1353.9	162	144192.0	135.8	27000.0	2047.6
Հրազդան	28	27500.0	119.4	617.1	425.1	18	16185.0	117.7	34848.5	1323.8
Շիրակի մարզ										
Ախուրյան	51	35852.7	199.0	6818.2	1946.1	16	14230.4	113.2	18750.0	330.8
Ամասիա								45.3	274.7	68.5
Անի	2	1828.0	225.0	225.0	225.0			67.9	180.6	98.6
Աշոցք								40.8	144.0	58.1
Արթիկ	26	14768.0	52.5	1364.3	332.8	9	10195.0	67.9	5000.0	174.9
Սյունիքի մարզ										
Գորիս	1	1250.0	176.0	176.0	176.0	8	6440.0	67.9	1700.0	246.1
Կապան	9	8435.0	34.0	909.5	324.7	2	900.0	67.9	2638.9	207.0
Մեղրի	4	1860.0	250.0	278.3	264.2	4	2320.0	67.9	632.9	126.8
Սիսիան						2	2608.0	67.9	875.0	142.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	24	18350.0	177.8	773.3	653.6	12	13721.0	67.9	7659.6	307.5
Վայք						1	324.0	77.0	1448.3	121.4
Տավուշի մարզ										
Բերդ						1	400.0	45.3	810.0	86.7
Իջևան	42	32130.0	50.8	2518.4	1282.4	30	23417.0	67.9	14423.1	437.3
Նոյեմբերյան						5	6000.0	45.3	1948.1	139.9

2008թ. առաջին եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 6 գործարքներ 7.64 հա մակերեսով, ընդ որում 1-ը՝ Արարատի /0.11 հա/, 2-ը՝ Լոռու /0.28 հա/, 3-ը՝ Շիրակի /7.25 հա/ մարզերում:

2008թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2716 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.7%: Ընդ որում, վարձակալության գործարքների 35.2% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2008թ. առաջին եռամսյակում 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 18.7%-ով, իսկ 2007թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 19.2%-ով:

2008թ. առաջին եռամսյակում հանրապետությունում իրականացված վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժման ունի աճի միտում:

2008թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 146 բնակարանների, 96 անհատական բնակելի տների, 1233 հասարակական, 125 արտադրական նշանակության օբյեկտների, 3 այգետնակներ, 1069 միավոր /13028.70 հա/ հողերի և 44 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկելված են հողերի վարձակալության գործարքներում:

2008թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 109 վարձակալության գործարքների, այդ թվում 35 միավոր /2.33 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է՝ 37.7%, իսկ 2007թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 73.0%-ով:

2008թ. առաջին եռամսյակում հանրապետությունում վարձակալված 13028.70 հա հողերից 16.52 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 13012.18 հա հողերի 83.23 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 10.99 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկային օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 8532.42 հա, որից 520.31 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 2836.98 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2008թ. առաջին եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.և՛ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.և՛ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	80	219.16
Արարատ	15	2261.98	61	367.60
Արմավիր	0	0.00	36	161.63
Գեղարքունիք	9	406.10	48	116.90
Լոռի	5	158.00	32	141.14
Կոտայք	1	0.30	36	86.94
Շիրակ	3	10.60	128	289.64
Սյունիք	0	0.00	17	520.31
Վայոց Ձոր	0	0.00	3	25.50
Տավուշ	0	0.00	2	0.42
Ընդամենը	33	2836.98	443	1929.24

2008թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5284 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 15.1%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 31.8%-ով, իսկ 2007թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 22.7%:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /46.5%/, առանձնատների /27.8%/, հասարակական նշանակության օբյեկտների /8.6%/ և հողերի /13.7%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1936 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. չորրորդ եռամսյակի

համեմատ նվազել է 35.2%-ով, իսկ 2007թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 15.4%-ով:

2008թ. առաջին եռամսյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 552 գործարքներ, որից 345-ը՝ Երևանում: Ընդ որում հիփոթեքային գրավադրման գործարքներից 63.6%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակականների, 28.6%-ն՝ անհատական բնակելի տների, 3.4%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.4-ական%՝ արտադրական նշանակության օբյեկտների և այգետնակների, 1.4%-ը՝ ավտոտնակների և 2.2%-ը՝ հողերի նկատմամբ:

2008թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 1228.83 հա հողեր, որից 18.08 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 97.3% կամ 1195.21 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 0.10 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 717.26 հա, որից 715.47 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2008թ. առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 16 և 12 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 26.3%-ով, իսկ 2007թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 47.4%-ով: 2008թ. առաջին եռամսյակում մասնավորեցման գործարքների բարձր տոկոսաչափն արձանագրվել է 35.7% Երևանում, իսկ ցածրը՝ 3.6-ական% Արագածոտնի, Արարատի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզում:

2008թ. առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 5719 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 25.7%-ով, իսկ 2007թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 14.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.3%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /34.6%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն